



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

.

.

ԱՌԱՐԿԱ

ՅԵՂԻՆԱԿ

ՄԱՐԶ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Դեռահասների անձնային

առանձնահատկություններն և նրանց

հետ արդյունավետ շփման կանոնները

Կենսաբանություն

Գայանե Մելքոնյան

Շիրակ

Մարալիկի թիվ 1 միջն. դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն	2
Հիմնական մաս	
2. Դեռահասության տարիքում անձնային առանձնահատկությունների ուսումնասիրումը Ռ. Կետտելի գործոնային վերլուծության օրինակով	4
3. Ուլքե՞ր են դեռահասները և հիմնականում ի՞նչի վրա է հիմնված նրանց անձնային առանձնահատկությունները	8
3.1 Դեռահասների վարքի դրսևորումները	10
Հետազոտական մաս	
4. Ինչպե՞ս օգնել դեռահասին	13
4.1. Հոգեբանական թեստ	13
4.2. Խառնվածքի որոշման թեստ	16
4.3. Դեռահասների հետ արդյունավետ շփման կանոնները	18
5. Եզրակացություն	22
6. Օգտագործած գրականություն	24

Ներածություն

Մեր հասարակության զարգացման ժամանակակից փուլում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային փոփոխությունները պայմանավորում են կրթական համակարգին նոր պահանջների թելադրումը: Ներկայումս հատկապես սուր է դրված հոգեպես և ինտելեկտուալ առումով զարգացած, ինքնուրույն, ակտիվ անձնավորության ձևավորման և դաստիարակության հարցը: Այդ մասին է վկայում աշակերտակենտրոն ուսուցման մոտեցումը, որը հիմնվում է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են՝ անձնավորությունը անկախությունը, ազատ ինքնորոշումը, ինքնաիրականացումը, նախաձեռնողականությունը, այսինքն՝ անձնային հատկություններ, որոնք կապված են անձի ինքնագնահատականի և համապատասխանաբար, հավակնությունների մակարդակի հետ: Տվյալ պարագայում բարձրանում է համարժեք ինքնագնահատականի ձևավորման խնդիրը: Իսկ նման բարդ սոցիալական պայմաններում, որոնցում մեծանում է ժամանակակից դեռահասը, ինքնահաստատվելը և ինքնորոշվելը կրկնակի բարդանում է՝ կապված ՉԼՄ-ների աճող և չվերահսկվող ազդեցության հետ: Որպես հետևանք՝ ունենում ենք հակասոցիալական վարքով դեռահասներ, դժվար երեխաներ, անչափահաս իրավախախտներ և հանցագործներ:

Դեռահասներին հասկանալու և օգնելու համար անձնային առանձնահատկությունների ուսումնասիրման և հետազոտման նպատակով տրված հոգեբանական ու խառնվածքի թեստերով ստանալ դեռահասի մոտավոր բնութագիր որը կնպաստի կանխատեսելու նրա վարքը որոշ իրավիճակներում և իր կարևորությունը կունենա դպրոցական միջավայրում, թույլ տալով ստեղծել նրանց ուսումնական գործընթացին հնարավորինս նպաստող պայմաններ: Լինելով ներառված այնպիսի կառուցվածքային գործընթացի մեջ ինչպիսին դասապրոցն է՝ ուսուցիչը պետք է ունենա արձագանքման հստակ մեխանիզմեր, որպեսզի կարողանա արդյունավետ հետադարձ կապ տալ դեռահասին և արդյունավետ իրականացնել դասապրոցեսը:

Չեռագոտության նպատակները

1. Օգնել դեռահասներին հաղթահարել ճգաժամը, վախերը :
2. Ձեռք բերել անկախությունը, ազատ ինքնորոշում, ինքնաիրականացում, նախաձեռնողականություն և, որ շատ կարևոր է մարդկանց հետ ազատ շփվելու ունակություն:
3. Նրբանկատորեն բնութագրել և տեղեկացնել սեռատարիքային անցումային փուլերի ռանձնահատկությունները

3. Նրբանկատորեն բնութագրել և տեղեկացնել սեռատարիքային անցումային փուլերի առանձնահատկությունները:

Չետազոտության խնդիրները

1. Ուսումնասիրել դեռահասների անձնային առանձնահատկությունները՝

ֆիզիոլոգիական, սեռական, հոգեբանական, սոցիալական:

2. Ուսումնասիրել նրանց պահվածքը դասարանում, դպրոցում, շփումը ուսուցիչների, ընկերների և շրջապատի հետ:

3. Պարզել խառնվածքները թեստի միջոցով :

4. Սահմանել դեռահասների հետ արդյունավետ շփման կանոնները, բացահայտել և վերլուծել:

5. Ապահովել նրանց զբաղվածությունը ներգրվելով դասարանական, արտադասարանական, արտադպրոցական խմբակներում և մասնակից դարձնել միջոցառումներին:

Չիմական մաս

Դեռահասության տարիքում անձնային առանձնահատկությունների ուսումնասիրումը Ռ.Կետտելի գործունային վերլուծության մոդելի օրինակով

Անձնային առանձնահատկությունների ուսումնասիրումը հետազոտողին տրամադրում է անձի բնութագիր, որը մարդու վարքը որոշ իրավիճակներում կանխատեսելու հնարավորություն է ընձեռում: Չարգացման տարբեր փուլերում անձնային գծերի ուսումնասիրությունը յուրահատուկ բնույթ է կրում: Անձի բնութագրի ուսումնասիրումը իր ուրույն կարևորությունն ունի դպրոցական միջավայրում, քանի որ աշակերտների անձնային առանձնահատկությունների իմացությունը թույլ է տալիս ստեղծել նրանց ուսումնական գործընթացին հնարավորինս նպաստող պայմաններ: Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում անձի հիմնական տեսություններում տիպականացման և դասակարգման խնդրին, դրանց ուսումնասիրման առանձնահատկություններին՝ շեշտադրելով դեռահասության շրջանը, ինչպես նաև դիտարկվում են դեռահասի անձի ուսումնասիրությանն ուղղված մեթոդները Ռ.Կետտելի գործունային վերլուծության մոդելի օրինակով:

Չանգուցային բառեր և բառակապակցությունները՝ անձնային առանձնահատկություններ, անձնային գծեր, գործունային վերլուծություն, անձնային հարցարաններ:

«Մարդու» հիմնախնդիրը դեռևս անտիկ ժամանակներից հետաքրքրել է մի շարք մտածողների, փիլիսոփաների, ուլքեր, փորձելով դասակարգել, խմբավորել մարդկանց, բախվել են անձի տիպականացման խնդրի:

Հետագայում, հոգեբանական գիտության զարգացմանը զուգընթաց, առաջարկվել են անձի վերաբերյալ մի շարք տեսություններ և հայեցակարգեր: Անձի տեսությունների բազմաթիվ ականավոր հեղինակներ անդրադարձել են անձնային առանձնահատկություններ հասկացությանը՝ փորձելով տեսության շրջանակներում տալ անձնային տիպերի՝ իրենց դասակարգումն ու նկարագրությունը: Ըստ մի շարք տեսությունների՝ անձնային առանձնահատկությունների ձևավորումը տեղի է ունենում անձի զարգացման տարբեր փուլերում առաջացող կոնֆլիկտի բացասական ելքից, իսկ անձնային տիպերը ունեն զարգացման որևէ փուլում ֆիքսվածության բնույթ, խնդրհարույց են ու դեստրուկտիվ:

Է. Էրիքսոն իր տեսության մեջ զարգացման ամեն փուլի համար ներկայացնում է որոշակի անձնային նորագոյացությունների կոնֆլիկտ, որի արդյունքում ձեռք է բերվում կամ կոնստրուկտիվ կամ դեստրուկտիվ որակ:

Ս. Սալլիվանի կողմից առաջարկած զարգացման փուլերում առանձնացվում է երկու ընդհանուր միտում՝ բավարարման և ապահովության ձգտում, որոնց բախումը միջավայրի հետ առաջացնում է կոնֆլիկտ:

Ըստ Օ. Ռանկի տեսության՝ գոյություն ունեն որոշակի ուժեր, որոնք անձին մղում են դեպի անհատականացում կամ ձուլում, միավորում [6]:

Կ. Գ. Յունգի առաջարկած անձի տիպոլոգիան սկզբունքորեն տարբերվում է նախորդ բոլոր տեսություններից, քանի որ առանձնացնում է բնավորության տիպեր՝ չհենվելով անձի զարգացման վրա և համարելով, որ անձնային առանձնահատկությունները բնածին են, ոչ դեստրուկտիվ: Յունգը նկարագրում է երկու գլխավոր, բնածին անձնային ուղղվածություններ՝ էքստրավերսիա և ինտրովերսիա, ինչպես նաև չորս անձնային գործառույթներ՝ մտածողություն, զգացմունքներ, զգայություն, ինտուիցիա, որոնք համադրվելով կազմում են ութ անձնային տիպ [7]:

Չնայած, անհատական հոգեբանության մեջ չի ողջունվում տիպաբանությունը, այնուամենայնիվ, **Ա.Ադլերը**, հիմք վերցնելով ընտանիքի կազմը, ընտանեկան մթնոլորտը, թերաթեքության զգացումը, առանձնացնում է կյանքի ոճեր կամ անձի վարկածային տիպեր[6]:

Է. Ֆրոմը, մշակելով անձի դասակարգման առավել բարդ և ամբողջական մոդել, կոնկրետ ընդգծում է բնավորության գիծ հասկացությունը, ինչպես նաև

առանձնացնում անձի ուղղվածությունն հասկացությունը: Նա առանձնացնում է անձի հինգ ուղղվածություն, որոնցից չորսը ոչ արդյունավետ (ռեցեսսիվ, շահագործող, կուտակող և շուկայական), իսկ մեկը՝ արդյունավետ ուղղվածություններ են:

Դ. Մակ-Կելլանդը, առանցքային համարելով մարդու ընտանիքը, առանձնացնում է նրա կենսագործունեության ընթացքում ձևավորվող անձնային երեք կարևոր բնութագրիչ՝ դրդապատճառ, անձնային գիծ և սխեմա:

Ս. Մադդին, դիտարկելով անձը ակտիվացման տեսության ներքո, առաջ է քաշում «ակտիվացման կոր» հասկացությունը: Նա առաջարկում է անձի գծերի 3 բարձր ակտիվացված և 3 ցածր ակտիվացված տիպեր: Կարևորելով խթանման նկատմամբ անձի ուղղվածությունը (արտաքին, ներքին)՝ Մադդին առաջ է քաշում արտաքին և ներքին անձնային գծեր հասկացությունները, որոնց համաձայն բաժանվում են վերը նշված 6 տիպերից յուրաքանչյուրը: Վերջիններս ևս բաժանվում են ըստ ակտիվության և պասիվության: Արդյունքում ակտիվացման տեսության սահմաններում ընդհանուր առմամբ առանձնացվում է անձի 24 տիպ:

Անձնային գծերի առաջին հանգամանալից հայեցակարգը մշակվել է 20- ու դարի 30-40-ական թվականներին **Գ. Օլպորտի** կողմից: Պատմականորեն «անձնային գիծ» եզրույթը առաջին անգամ տվյալ կոնտեքստում կիրառել է հենց նա [6]: Կարևորելով անձի յուրատիպությունը, նա առանձնացրեց ընդհանուր և անհատական գծեր հասկացությունները: «Անձնային գծեր» եզրույթը կիրառեց միայն ընդհանուր գծերը նշելու համար, իսկ անհատական գծերի համար առանձնացրեց «անձնային դիսպոզիցիաներ» հասկացությունը: Նա կարևորում էր անձի միջուկի, պրոպրիումի հետ անձի դիսպոզիցիաների հարաբերակցության բնույթը: Ըստ նրա՝ պրոպրիումային ֆունկցիաները ունեն իրենց առանձին արժեքները, նպատակները և սկզբունքները, որոնք պետք է կազմեն անձնային դիսպոզիցիաների բովանդակությունը:

Անձնային գծերի հաջորդ խոշոր հայեցակարգը մշակվել է **Ռ. Կետտելի** տեսության մեջ, որի ամենակարևոր ներդրումը անձի տեսություններում անձի համակարգային նկարագրումն է:

Չնայած շատերը մեղադրում էին Կետտելին սկզբնական տեսությունն չունենալու, բացառապես էմպիրիկ՝ փորձարարական աշխատանքի հիման վրա կանխատեսումներ անելու մեջ, նա այդ տեսությունը իր մաթեմատիկական մոդելներն էր համարում և պնդում էր, որ անձի զարգացման ու գործառնության աղեկվառ տեսությունը պետք է անպայման

Եր, որ անձի զարգացման ու գործառնության ադեկվատ տեսությունը պետք է անպայման հիմնվի հետազոտման խիստ մեթոդների և ճշգրիտ չափումների վրա: Ըստ Կետտելի՝ անձնային դրդապատճառները անհրաժեշտ է ուսումնասիրել միայն անհատական առանձնահատկությունների վերաբերյալ ունեցած հստակ տվյալների հիման վրա: Այնուամենայնիվ, մետատեսական դրույթներով, որոնք ընդգծում են հոլիզմը, դրդապատճառները և գործառնությունը՝ ֆունկցիոնալիզմը, Կետտելի տեսությունը մոտ է Գ. Մյուրեի և Գ. Օլպորտի անձի տեսություններին (2, էջ 4): Կետտելը անձը սահմանում է «այն, ինչը թույլ է տալիս կանխատեսել տվյալ իրավիճակում մարդու գործողությունները», իսկ անձնային գիծը որպես «այն ինչը որոշակի իրավիճակի հետ բախվելիս կանխորոշում է մարդու գործողությունները» (4, էջ 229): Այս սահմանումը ցույց է տալիս Կետտելի ամբողջական տեսական և էմպիրիկ մոտեցումը «անձ» հասկացությանը, անձնային գծերին վերագրվող կանխատեսող արժեքը:

Չետագայում Կետտելի բազային հարցարանի հիման վրա ստեղծվել են դեռահասության տարիքի համար հարմարեցված գործնային վերլուծության մի շարք մեթոդիկաներ: Չամառոտ ներկայացնենք դեռահասության շրջանում անձի ուսումնասիրման առանձնահատկությունները: Դեռահասության շրջանը զարգացման ամենաբարդ փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի են ունենում զարգացման բոլոր կողմերը (ֆիզիոլոգիական, հոգեբանական և սոցիալական) շոշափող որակական փոփոխություններ:

Այն բնութագրվում է որպես ես–ի ձևավորման շրջան, հանգեցնում է անձնային բնույթի մի շարք փոփոխությունների, որոնք առնչվում են խառնվածքին, բնավորությանը, վարքի դրդապատճառներին: Մի կողմից այս փոփոխությունները դեռահասի կյանքում առաջ են բերում տարաբնույթ դժվարություններ՝ նյարդային համակարգի անհավասարակշռություն և գրգռվածություն, հետաքրքրությունների, արժեքների, զգացողությունների անկայունություն և հակասականություն, անորոշություն սեփական ապագայի հանդեպ, սեփական ես–ի ձևավորման, նշանակալից խմբերի կողմից ընդունված լինելու անհրաժեշտություն և այլն: Մյուս կողմից դեռահասության շրջանում առաջանում է հետաքրքրություն սեփական անձի հանդեպ, արդիական է դառնում ինքնաճանաչողության, ինքնավերլուծության ձգտումը: Վերոհիշյալ գործոնները դեռահասի անձի ուսումնասիրումը դարձնում են շատ կարևոր, քանի որ հոգեախտորոշիչ մեթոդների միջոցով դեռահասի անձի ուսումնասիրությունը կարող է օգնել նրան հաղթահարելու առաջացած դժվարությունները, բավարարելու սեփական անձի հանդեպ

հետաքրքրությունն ու նպաստելու ինքնագիտակցության, սեփական ես–ի ամբողջական պատկերի ձևավորմանը: Դեռահասությունը, մանկությունն ու հասունությունն իրար կապող անցումային շրջան հանդիսանալով, պահանջներ է ներկայացնում դեռահասի անձի ուսումնասիրմանը՝ ենթադրելով առանձնահատուկ մոտեցում և մեթոդներ: Դեռահասներն արդեն երեխաներ չեն, բայց դեռ մեծահասակներ էլ չեն, ինչը ենթադրում է, որ նրանց համար նախատեսված հատուկ հոգեախտորոշիչ մոտեցումը պետք է հաշվի առնի ինչպես նրանց մանկական, այնպես էլ մեծահասակներին բնորոշ առանձնահատկությունները: Թեև մեծահասակների համար նախատեսված մի շարք հոգեախտորոշիչ մեթոդիկաներ լիովին կարելի է կիրառել դեռահասների, հատկապես ավագ դպրոցականների նկատմամբ, դեռահասների անձի բազմակողմանի ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է հենվել տվյալ տարիքի համար արդիական, կարևոր հարցերի վրա և հաշվի առնել տարիքով պայմանավորված առանձնահատկությունները [3;8]:

Այսպիսով, դեռահասների հետ կիրառվող հոգեախտորոշիչ մեթոդները պետք է հետաքրքրություն առաջացնեն, ինքնուրույնության ու ոչ բովանդակային փոփոխություններ մտցնելու, ոչ ստանդարտ պատասխաններ տալու, սեփական անձը դրսևորելու, գիտելիքներն ու կարողությունները ցուցադրելու հնարավորություն տան դեռահասին: Դեռահասներին բնորոշ հետաքրքրությունն ինքնաճանաչողության հանդեպ բարենպաստ պայմաններ է ստեղծում հոգեախտորոշիչ մեթոդիկաների կիրառման համար, հատկապես եթե դրանք հետաքրքիր և օգտակար տեղեկություններ են տրամադրում դեռահասին սեփական անձի մասին, օգնում են նրան ավելի լավ ճանաչելու իրեն ու համեմատվելու մյուսների հետ: Հաշվի առնելով դեռահասների անձնային, սուբյեկտիվ ընկալումն ու իրենց մոտ որոշ դրական որակներ տեսնելու և որոշ բացասական որակներ չտեսնելու չափազանց մեծ ցանկությունը՝ դեռահասներին առաջարկվող մեթոդները պետք է նվազագույնի հասցնեն սուբյեկտիվ դիրքորոշումների ազդեցությունը ընթացիկ թեստավորման արդյունքների վրա: Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել նաև հրահանգի և հարցադրումների ձևակերպմանը, որտեղ ձևակերպումները պետք է լինեն կոնկրետ, տվյալ տարիքի ներկայացուցիչների համար պարզ, մատչելի, պարունակեն ոչ այնքան գիտական, որքան կենցաղային հասկացություններ [3;8]:

Ուլքե՞ր են դեռահասները և հիմնականում ինչի՞ վրա են հիմնված նրանց անձնային առանձնահատկությունները

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ դեռահասային տարիքն ընդգրկում է 10-19 տարեկանը, իսկ մեր օրենսդրության համաձայն՝ այն համապատասխանում է 10-18 տարեկանին: Այդ շրջանում տեղի են ունենում ֆիզիոլոգիական, սեռական, ինչպես նաև հոգեբանական փոփոխություններ: Տարբերում են նաև հոգեսեռական զարգացում, որի ընթացքը խիստ անհատական է: Դա դեռահասի սեռականության զարգացումն է, որի համար նշանակություն ունեն ազգային սովորույթները, դաստիարակությունը, անհատի խառնվածքը, պահվածքը, շրջապատը: Դեռահասի հասունացման ճիշտ ընթացքը որոշակի մոտեցումներ է պահանջում ծնողների, ուսուցիչների և շրջապատի կողմից, քանի որ այդ ժամանակ առաջացած շեղումները կարող են լուրջ խնդիրների պատճառ հանդիսանալ: Այս շրջանը կոչվում է

Ե՞րբ է սկսվում սեռական հասունացումը:

Նորմայում աղջիկների համար հասունացման սկիզբը համարվում է 9-10 տարեկանը, իսկ տղաների համար՝ 1-2 տարի ավելի ուշ: Սեռական հասունացումն սկսվում է, երբ օրգանիզմում սկսվում են արտադրվել մեծ քանակությամբ սեռական հորմոններ, որոնց դիսբալանսը օրգանիզմի համար նոր երևույթներ են, ինչի հետևանքով դեռահասի օրգանիզմում տեղի են ունենում կարևոր, նրա հասունացումն արտահայտող փոփոխություններ: Անդրոգենների և էստրոգենների ազդեցության տակ արտահայտվում են երկրորդային սեռային հատկանիշները: Աղջիկների մոտ ևս որոշ չափով արտադրվում են արական հորմոններ՝ անդրոգեններ, որոնք բերում են գերքրտնարտադրության, պզուկների առաջացման, մազակալման: Այդ պրոցեսը կոչվում է ադրենարիա:

Ֆիզիոլոգիական, սեռական, հոգեբանական փոփոխություններն ընթանում են ոչ թե միաժամանակ, այլ փուլ առ փուլ: Առաջինն սկսվում է ֆիզիոլոգիական հասունացումը, երբ դեռահասի մոտ թռիչքային աճ է նկատվում, ինչի հետ կապված կարող են նաև հոգեբանական խնդիրներ առաջանալ, ապա հաջորդում է սեռական հասունացումը:

Հասունացման առաջին նշանը կարճ ժամանակահատվածում աճի թռիչքն է, ընդ որում առաջին հերթին աճում են վերջույթները, ականջը, քիթը, ի հայտ են գալիս սեռին բնորոշ մարմնաձևեր: Աղջիկների մոտ սեռական հասունացումը կարող է սկսվել կրծքագեղձերի մեծացմամբ, ապա հաջորդում է թևատակերի և սեռական օրգանների շրջանի մազակալումը, փոխվում է մարմնի հոտը՝ քրտնագեղձերի և ճարպագեղձերի ակտիվ գործունեության հետևանքով, սկսվում է դաշտանային ցիկլը:

Տղաների մոտ առաջին նշանը ամորձիների մեծացումն է: Հետո միայն սկսվում է բնորոշ մազակալումը և պզուկների առաջացումը: Հասունացման կարևոր դրսևորումներից է սերմնաժայթքումը: Կարող են լինել հասունացման արտահայտությունների որոշ տարբերություններ. նշանակություն ունեն ընտանիքը, ժառանգականությունը: Հաճախ ծնողները տեսնելով, որ իրենց 11-12 տարեկան երեխան արդեն հասակով իրենց հավասար է, կարծում են, թե նա արդեն մեծացել է, գիտակցում է ամեն բան և կարիք չկա նրան օգնել, ինամել: Սակայն դա այդպես չէ, երեխան մարմնի չափերով հասունացած է, ֆիզիոլոգիապես էլ արդեն հասունացման երևույթները կան, բայց հոգեբանական, սոցիալական հասունացումը դեռևս բացակայում է:

Դեռահասի առաջ կարող են դրվել շատ պահանջներ, այն ինչ նեյրոհոգեբանության և հոգեբանության մի շարք հետազոտություններից պարզ է դարձել, որ ճակատային բուլթը, որը կամքի ուժի կենտրոնն է համարվում, 13 տարեկանների և 17 տարեկանների մոտ տարբերվում է զարգացման մակարդակով, այսինքն՝ ինքնակառավարման պահանջները վաղ դեռահասների համար ավելի դժվար են կատարվում, քան ուշ դեռահասների մոտ: Արգելակվածությունը կամ շատ բուռն արձագանքները նույնպես ունեն իրենց կենսաբանական պատճառները: **Պարզապես լիմբիկ կենտրոնը**, որը պատասխանատու է մեր հույզերի համար, դեռևս ամուր կապերով կապված չէ ճակատային բլթի հետ: Այսինքն՝ հույզերի և կամքի կապը դժվարացած է:

12-14 տարեկանից հետո են միայն ձևավորվում մեծահասակին բնորոշ մտածելակերպը և աբստրակտ պատկերացումները: Փոքր երեխան շատ անմիջական պատկերացում ունի. նա անգամ չի պատկերացնում իր քայլերի հետևանքները: Աբստրակտ մտածողությունը ձևավորվում է 16-17 տարեկանում: Այս շրջանում կարևոր է ծնողների, ընկերների, շրջապատի հոգեբանական աջակցությունը: Ծնողները պետք է պատասխանատու լինեն երեխայի համար, ընկերներ լինեն, ուղղորդեն, օգնեն, խորհուրդ տան և անընդհատ պատժողի դերում չլինեն: Սխալը պետք է փորձեն վերլուծել երեխայի հետ, բացատրեն նրան: Մինչդեռ հաճախ ծնողները քննադատում են երեխային, ինչը բերում է ինքնազնահատականի իջեցման: Երեխայից պահանջում են մեծին բնորոշ պատասխանատվություն, որն իրականում նա դեռ չի կարող ունենալ:

Այս տարիքում կարող են առաջանալ հոգեբանական խնդիրները՝ լուրջ տագնապներ, դեպրեսիաներ, սուլիցիդի հակումներ, հիասթափվել, որովհետև այդ տարիքում ամեն ինչ

այնքան հակասական է, որ թվում է ամեն մի մանրուք շատ մեծ կարևորություն ունի, օրինակ՝ ընկերոջ դավաճանությունը, ուսուցչի կոպիտ վերաբերմունքը: Պետք է ուշադիր լինել հատկապես այն դեպքերում, երբ երեխան 3 շաբաթից ավելի իր սովորական գործերով չի զբաղվում, անընդհատ մեկուսանում է, լաց լինում, կամ ինչ-որ մտքեր է արտահայտում, որ չի ուզում ապրել, միայն մի տեսակի հագուստ է կրում, երբեմն միայն սև, աղջիկները նաև սև են ներկում աչքերը, շուրթերը, եղունգները:

Երեխաները սեռական դաստիարակությունը անհրաժեշտ է դեռ չնձված

ավելի ճիշտ է ասել ոչ թե սեռական դաստիարակություն, այլ գրագիտություն: Սեռական դաստիարակությունն սկսվում է դեռևս ծնվելուց առաջ և դրան բոլորն են մասնակցում՝ ծնողը, ուսուցիչը, ընկերը, որովհետև պարզապես մեկին դաստիարակում են որպես տղա, մյուսին՝ որպես աղջիկ:

Այժմ դպրոցներում 8-11-րդ դասարանցիների ֆիզկուլտուրայի ծրագրի մեջ «Առողջ ապրելակերպ» դասընթաց կա, որտեղ ուսուցանվում են նաև վերարտադրողական ֆունկցիայի, սեռական առողջության հիմունքները: Դրա մեջ մտնում են զարգացումը, հիգիենան, ճիշտ վարվելակերպը, վտանգներից խուսափելը, ճիշտ վարքագծի դրսևորումը:

Ճիշտ կլիներ այդ դասերն ավելի շուտ սկսել, քանի որ հասունացումը աղջիկների մոտ սկսվում է 11-12,5 տարեկանում, իսկ տղաների մոտ՝ 13-14 տարեկանում, և նրանք արդեն, մինչև այդ տարիքը պետք է տեղեկացված լինեն հիգիենայի, սեռավարակների և այլ վտանգների մասին: Դեռահասային տարիքում շատ կարևոր է հիգիենայի ճիշտ պահպանումը:

Դեռահասների վարքի դրսևորումները

Չիմա, երբ պարզ է՝ ինչ փոփոխություններ են կատարվում դեռահասի մոտ, հարկ է հասկանալ՝ հետաքրքրությունների ի՞նչ շրջանակ է նա ձևավորում, ինչպիսի՞ վարքագիծ ցուցաբերում, և ինչպե՞ս պետք է մոտենան այդ ամենին ծնողները, ուսուցիչները:

Սկզբում երեխայի հետաքրքրությունների շրջանակը պայմանավորված է լինում ընտանիքում առկա արժեքներով, բայց ժամանակի ընթացքում նրա համար կարևոր են դառնում արդեն այլ խմբեր: Ցանկալի է՝ դեռահասը տարբեր խմբերում ներառված լինի, ունենա ընտրության հնարավորություն: Բացի այդ, հարկավոր է հիշել՝ ընտանեկան լարված մթնոլորտը տարիքային բոլոր փուլերում արգելակում է զարգացումը: Դժվարանում է դասերի ժամանակ կենտրոնացման պրոցեսը: Խախտվում է ապահովության զգացումը, երեխաները երբեմն զգում են մեղքի անտեղի զգացում ստեղծված իրավիճակի համար:

Ստացվում է՝ այն էներգիան և ժամանակը, որ պետք է ծախսվեին իր դասերի համար, ներդրվում են ընտանեկան իրադրությունը փոխելու մեջ: Այնինչ ծնողների պարտավորությունն է ստեղծել հարաբերական հանգիստ տանը, որն իր հերթին կստեղծի պայմաններ երեխայի զարգացման համար: Դեռահասները հաճախ կարող են կոպտել, դա առաջին հերթին խոսում է չհասկացվածության մասին:

Որպես կանոն, երեխան չի կարողանում ծնողներին ուղիղ ներկայացնել իր պահանջմունքները: Նա դրանք ասում է տողատակերով, քողարկված ձևով և ենթատեքստերով պարուրված: Անհրաժեշտ է դեռահասին սովորեցնել պահանջմունքների մասին խոսել հնարավորինս ուղիղ: Դրա համար հարկավոր է, որ ծնողներն էլ սովորեն իրենց պահանջմունքները ուղիղ բարձրաձայնել:

Դեռահասը կարող է կոպտել նաև այն դեպքում, երբ ծնող-երեխա հարաբերություններում կան խռովություններ, որոնք նրա ներսում սպիների պես մնացել են: Տվյալ պարագայում կարելի է փոքրիկ խաղ կազմակերպել. գրում ենք երեք խռովություն, որոնց մասին ես մոռացել եմ, բայց դու՝ ոչ: Ե՛վ ծնողներն են գրում, և՛ երեխաները: Ներսում պահածը բարձրաձայնելու բեռը ընկնում է նրանց ուսերից:

Դեռահասության ամենավառ առանձնահատկություններից մեկն **անձնային անկայունությունն է:** Դա առաջին հերթին դրսևորվում է տրամադրության հաճախակի տատանումներով, աֆեկտիվ «բռնկունությամբ», այսինքն՝ հուզական լաբիլությամբ, որը պայմանավորված է սեռական հասունացմամբ եւ օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական վերակառուցման գործընթացներով: Շրջապատի սպասելիքներն արդարացնելը, խրախուսանք ստանալուն ձգտելը, հեղինակությունների կարծիքին հակված լինելը հանդիսանում է դեռահասի անձնային եւ վարքային անկայունության պատճառը: Նա ամբողջովին կախված է արտաքին ազդեցություններից: Քանի որ դեռահասներն իրենց համար ռեֆերենտային խմբեր են փնտրում հասակակիցների շրջանում եւ մտերիմ ընկերների կարիք ունեն, հաճախ վերջիններիս կարծիքը որոշիչ է լինում: Հաճախ ընկերների հետ միասին դեռահասները կարող են այնպիսի քայլեր կատարել, որոնք միայնակ երբեք չէին համարձակվի անել եւ ապագայում էլ կարող են զղջալ արածի համար:

Նրա «ես»-ի տարբեր պատկերները

(«որքան ընդունակ, գեղեցիկ, շփվող եւ ուժեղ եմ ես»)

փոփոխական են եւ չեն ձուլվում ամբողջական, հարմոնիկ եւ կայուն համակարգին: Ինչպես նշվեց վերելում, անձի կայունացումը սկսվում է հենց դեռահասության տարիքի ավարտին, իսկ հաճախ՝ ավելի ուշ: Մոտավորապես 15-16 տարեկանում Ես-կոնցեպցիան պետք է

արդեն ձեռավորված լինի:

Դեռահասի անձնային անկայունության մասին կարելի է դատել նրա վարքում եւ անձի դրսեւորումներում ծայրահեղ, իրարից տարբեր որակների առկայությամբ, նրա բնավորության եւ հավակնությունների հակասականությունից:

Դեռահասության տարիքում դեռահասի վարքում ուրիշների կողմից գնահատված եւ ընդունված լինելու ձգտումը կարող է դրսեւորվել սեփական ինքնուրույնության եւ թերությունների արտահայտմանը զուգահեռ, ամաչկոտությունը՝ սանձարձակության, սենտիմենտալությունը՝ կոպտության, զգացմունքային երազկոտությունը՝ չոր փիլիսոփայելու հետ: Դեռահասը ցանկանում է լինել բոլորի նման՝ միեւնույն ժամանակ ամեն կերպ փորձելով առանձնանալ բոլորից: Նա պայքարում է հեղինակությունների դեմ, համընդհանուր նորմերի, կանոնների եւ իդեալների դեմ, բայց միեւնույն ժամանակ աստվածացնում է պատահական կուռքերին:

Անկայունությամբ, ծայրահեղությունների մեջ ընկնելու հակումով, արտաքին ազդեցություններով են պայմանավորված այս տարիքում հաճախ հանդիպող սոցիալական խնդիրները, որոնք նաեւ անվանում են դեռահասության խնդիրներ, վաղ ակոհիոլամիությունն է, տոքսիկոմանիան, թմրամիջությունը, դելինկվենտ վարքը, ինքնասպանությունները: Այս վատթարագույն հետեւանանքներին հաճախ հանգեցնում են մեկուսացվածությունը, տանը եւ դպրոցում չհասկացվածության զգացումը, ասոցիալ խմբի կամ նմանատիպ փորձ ունեցող հասակակիցների հետ հանդիպումները:

Ոստիկանությունում կամ նարկոլոգիական դիսպանսերում հայտնված դեռահասներից բոլորը չեն անբարենպաստ ընտանքներից: Պատահում է, որ «դժվար» են դառնում նաև սիրված երեխաները, որոնց տանը սերը չի պակասել, բայց նրանք բավարարված չեն հասակակիցների կամ մեծահասակների հետ հարաբերություններով, իրենց անհաջողակ են համարում կամ բավարար չափով չեն ծանրաբեռնված գործերով, ձանձրանում են եւ այլն: Դեռահասության խնդիրների պատճառները բազմազան են: Դրանցից մեկն ինքնահաստատվելու եւ տարբերվելու ցանկությունն է՝ զուգորդված համընդհանուր նորմերի եւ օրենքների դեմ բողոքով:

Բողոքը դեռահասներին միավորում է մի շարք ոչ ֆորմալ խմբերի կամ շարժումների մեջ, որոնք տարբերվում են իրենց գաղափարախոսությամբ եւ խորհրդանշաններով: Ներկայում կան շատ տարբեր խմբեր եւ դեռահասների շարժումներ՝ պանկերը, Էմոները, ռոքերները, ռեպերները, ֆաշիստներն, սկինհեդները եւ այլն: Բոլոր դեռահասները, ովքեր ընդգրկվում

են նման խմբերում եւ հոսանքներում, սոցիալապես հարմարված չեն, նույնիսկ, եթե ուղղակի ագրեսիա չեն դրսեւորում:

Բողոքը դեռահասներին դրդում է տնից փախուստի դիմելու, թափառաշրջիկության: Որոշ դեռահասներ ինչ-որ ռոմանտիկա են գտնում գիշերելու տեղ փնտրելու, սնունդ հայթայթելու եւ նմանատիպ այլ արկածների մեջ:

Առանձնահատուկ դժվար իրավիճակներում դեռահասները կարող են սուկիցիդալ վարք դրսեւորել, մահվան մասին մտքեր, սպառնալիքներ արտահայտել, ինքնասպանության փորձ կատարել: Սակայն դեռահասների միայն 10%-ն է իսկապես ցանկանում մահանալ, մնացած 90%-ի սուկիցիդալ վարքը միայն «օգնության ճիչ է»:

Ինչպե՞ս օգնել դեռահասներին

Վերը նշված դեռահասի անձնային առանձնահատկությունների բոլոր տիպերի ուսումնասիրությունը և տիրապետումը հնահավորութուն է տալիս ուսուցչի և դեռահասների միջև կոնտակտի հաստատման: Ուսուցիչների և դեռահասների միջև կոնտակտի հաստատումը դպրոցական կյանքում կարելի է ասել ամենաբարդ շրջաններից մեկն է: Դեռահասները սկսում են ուսումնասիրել շփման նոր ձևերը մեծահասկների հետ, բայց միևնույն ժամանակ խիստ սահմաններ են դնում իրենց հետ շփման ընթացքում: Լինելով ներառված այնպիսի կառուցվածքային գործընթացի մեջ ինչպիսին դասապրոցեսն է՝ ուսուցիչը պետք է ունենա արձագանքման հստակ մեխանիզմեր, որպեսզի կարողանա արդյունավետ հետադարձ կապ տալ դեռահասին և արդյունավետ իրականացնել դասապրոցեսը:

Դրա համար յուրաքանչյուր ուսուցիչ՝ հատկապես դասուցիչը

1. Նախապես պետք է ուսումնասիրի դեռահասին հոգեբանական և խառնվածը պարզող թեստերի միջոցով

2. Մշակի դեռահասների հետ արդյունավետ շփման իր կանոնները:

Աշակերտի պատկերացումներն ու կապը շրջապատի հետ կարելի է ուսումնասիրել նախապես հոգեբանական հարցերով կազմած թերթիկներով:

1. Ի՞նչ հարաբերություններ ունեք ձեր ծնողների հետ:

2. Ինչպիսի՞ հարաբերություններ ունես հասակակիցներիդ հետ:

3. Ինչպե՞ս ես քեզ վերաբերվում ընդհանրապես

ա. դրական բ. բացասական գ. ինչ-որ այլ կերպ

4. Ի՞նչ եք ակնկալում ապագայից:

5. Եթե չափահաս մարդ ունենաս կողքիդ, ո՞ւմ կվստահես:

6. Եթե հասակակիցներիդ մեջ ընկեր ունես, ո՞ւմ կարող ես ամեն ինչ պատմել:

7. Ի՞նչն է հիմա ձեզ համար ավելի կարևոր:

- ա. ուսումնասիրությունները
- բ. հաղորդակցություն հասակակիցների հետ
- դ. գրուցեք ընկերների հետ
- զ. ինչ որ այլ բան

ե. ընդհանուր առմամբ հաղորդակցություն (մեծահասակների, երեխաների հետ)

8. Ի՞նչն էք ամենաշատը գնահատում մարդկանց մեջ:

Սովորողները աշխատում են ինքնուրույն, յուրաքանչյուրն իր թերթիկով: Ցանկացած անորոշության պարզաբանման համար նրանք կարող էին դիմել ուսուցչին:

Փորձարարական աշխատանքի արդյունքների վերլուծություն.

Ուսումնասիրության արդյունքները բաժանեցինք 3 խմբի՝

1. հոգեբանական բնութագրերի (ինքն իրեն նկատմամբ վերաբերմունք, ապագայի նկատմամբ վերաբերմունք)

2. հոգեբանական բնութագրերի (ծնողների և հասակակիցների հետ հարաբերություններ, մտերիմների առկայություն, մեծահասակ, մտերիմ հասակակից)

3. հոգեբանական բնութագրերի «Ի՞նչն էք ամենաշատը գնահատում մարդու մեջ»

Ընդհանուր առմամբ, ձեռք բերված տվյալները ուշադիր ուսումնասիրելուց հետո մենք կարող ենք պարզել հոգեբանական բնութագրերի (ինքն իրեն նկատմամբ վերաբերմունք, ապագայի նկատմամբ վերաբերմունք: 3 և 4 հարցերը) և հոգեբանական բնութագրերի (ծնողների և հասակակիցների հետ հարաբերություններ, մտերիմների առկայություն:

1,2,5,6,7 հարցերը) ուղիղ համեմատական հարաբերությունների առկայության

միտումները:

Մասնավորապես, իրենց նկատմամբ դրական վերաբերմունք ունեցող աշակերտների շրջանում նկատվում է դրական պահերի գերակշռում այլ ոլորտներում՝

(հարաբերություններ ծնողների հետ), (հարաբերություններ հասակակիցների հետ), (մոտ մեծահասակի ներկայություն), (մոտ հասակակիցի առկայություն), որը ցույց է տալիս այս դեռահասների հուզական կայունությունը.

Իրենց նկատմամբ բացասական վերաբերմունք ունեցող աշակերտների մոտ զգալիորեն ավելացել են խնդիրներն այլ ոլորտներում:

Ինչ վերաբերում է ապագայի նկատմամբ տարբեր վերաբերմունք ունեցող աշակերտներին, ապա այս միտումը դրսևորվում է նաև այստեղ, թեև ոչ այնքան հստակ:

Այս բոլորից մենք կարող ենք եզրակացություն անել.

Դեռահասի անձնական բարեկեցությունը, իր հետ խաղաղությունը և ապագայի

լավատեսական հայացքը, մի կողմից, մեծապես կախված են նրա հաջողություններից՝ այլ

մարդկանց հետ շփվելու ճախողումներից (այս ոլորտում դրական արդյունքները դեռահասին տալիս են հաստատում. նրա կարևորությունը, ցույց են տալիս նրա ընդունումը մեծահասակների և հասակակիցների շրջանում, դրա համապատասխանությունը հասարակության նորմերին և, որպես հետևանք, ապագայում բարեկեցության հույս է տալիս): Մյուս կողմից, «ես-ինքս» վերաբերմունքն իր հերթին որոշակի ազդեցություն է ունենում «ես-ուրիշների» վերաբերմունքի վրա (դեռահասը, վստահ լինելով իր ուժերին և ապագայում, համապատասխանաբար կառուցում է իր հաղորդակցությունը այլ մարդկանց հետ. նա հեշտությամբ կապ է հաստատում, չի վախենում բացվելուց, չի նահանջում ճախողման առաջ, որը, ի վերջո, ամենից հաճախ ստացվում է արդյունավետ և հաջողակ): Այսպիսով, ստացված արդյունքները հաստատում են մեր վարկածը «ես-ինքս» և «ես-ուրիշներ» հարաբերությունների փոխկախվածության մասին: Եվ հնարավորինս ազդելով մեծահասակների և հասակակիցների հետ դեռահասների հարաբերությունների ոլորտի վրա՝ այն օպտիմալացնելու նպատակով, մենք կարող ենք նաև օգնել բարելավելու նրանց հուզական ֆոնը, վերաբերմունքն իրենց և ապագայի նկատմամբ:

«Ի՞նչն էք ամենաշատը գնահատում մարդու մեջ» դեռահասներին առաջարկված հարցաշարը ներառում էր նաև դեռահասի համար ամենակարևոր բնավորության գծերին և գործունեությանը վերաբերող հարցեր: Տվյալների մշակումից և դասակարգումից հետո ստացանք հետևյալ արդյունքները: Դեռահասները խոսելով անհատականության ամենաարժեքավոր գծերի մասին՝ ամենից հաճախ անվանել են բարություն, բնավորություն, ազնվություն, ուշադրություն: Մի քանի անգամ հիշատակված՝ հարգանք, առատաձեռնություն, քաղաքավարություն, աշխատասիրություն, խելացիություն և մի քանիսը: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած հասարակության մեջ տիրող դաժանությանը, անտարբերությանը, կոպտությանը (կամ գուցե «դրանց շնորհիվ»), բարությունը, հասկացողությունը, քաղաքավարությունը, առատաձեռնությունը հավանության են արժանանում և ողջունվում դեռահասների կողմից: Բայց ըստ ամենայնի, երիտասարդ սերունդները հասկանում է այսօրվա կյանքը՝ առանձնացնելով այնպիսի անձնային հատկանիշներ, ինչպիսիք են բնավորությունը, աշխատասիրությունը, խելքը:

Սա հանգեցնում է այն եզրակացության, որ այսօրվա երիտասարդությունը սկսում է ավելի վաղ, ավելի լուրջ և գիտակցաբար մտածել ապագայի մասին՝ դպրոցը որպես մասնագիտություն ձեռք բերելու անհրաժեշտ պայման: Այնուամենայնիվ, ընկերների հետ շփումը շարունակում է կարևոր դեր խաղալ:

Մարդկանց խառնվածքների տիպերը

Երկու հազար տարուց ավելի է, որ մարդկային խառնվածքը գտնվում է գիտության ուշադրության կենտրոնում: Խառնվածքներով են որոշում մարդկանց հոգեկան տարբերությունները, հույզերի արտահայտվածության աստիճանի, վարքային ակտիվության, հոգեկան կայունության բնութագրերը: Խառնվածքը բնածին է և կյանքի ընթացքում երբեք չի փոխվում: Խառնվածքների տիպերից և ոչ մեկը չի հանդիպում <մաքուր> տեսքով: Այդ իմաստով կարող ենք խոսել որոշ տիպի գերիշխանության մասին: Սակայն, ամեն ոք, ինչպիսի տիպի էլ պատկանի՝ իր մեջ կրում է բոլոր տիպերի հատկությունները: Ժամանակակից հոգեբանության մեջ խառնվածքը դիտվում է, որպես մարդու նյարդային համակարգի տիպի հոգեբանական դրսևորումը, որի մեջ մտնող հատկությունները բնորոշում են հոգեկան գործունեության շարունակությունը: Այս թեստի օգնությամբ կարող ենք պարզել թե ինչպիսի՞ խառնվածքի տեր դեռահասների հետ գործ ունենք:

Պարզապես պատասխանում են թերթիկում գրված հարցերին, միավորները գումարու իրար ու արդյունքում ծանոթանում իրենց խառնվածքին:

1. Այսօրվա կյանքի ի՞նչն էք սիրում (Ամեն ինչը-10, ոչինչ չեմ սիրում-7, նայած ինչը-5)
2. Այս կյանքի ի՞նչը ձեզ դուր չի գալիս (ամեն ինչը-3, նայած ինչը 6)
3. Երբ մտնում եք անծանոթ միջավայր, շու՞տ եք շփման մեջ մտնում (այո-10, ոչ-8)
4. Դուք օպտիմիստ եք (լավատես), թե՞ պեսիմիստ (վատատես) (օպտիմ. -9, պեսիմիստ-2)
5. Տարվա ո՞ր եղանակն էք սիրում եւ ինչու՞ (ամառը-3, գարունը-4, աշունը-2, ձմեռը-1)
6. Ո՞ր գույնն էք սիրում (բոլորը դուր են գալիս-5, ինչ-որ գույնի անուն-8, մի քանի գույն-9)
7. Թռչուններ սիրու՞մեք (այո-7, ոչ-1, նայած ինչ թռչուն-3)
8. Գազաններ սիրու՞մ եք (այո-8, ոչ-1, նայած ինչ գազան-4)
9. Ձեզ ինչպիսի՞ կենդանիներ են դուր գալիս՝ ընտանի, թե վայրի (ընտանի-10, վայրի-9 , երկուսն էլ-6)
10. Դուք սիրո թեմային ինչպե՞ս եք մոտենում (լուրջ-10, սովորական-8, լուրջ չեմ մոտենու-5)
11. Դուք օգնու՞մ եք թույլերին (այո-11, ոչ-0, նայած ժամանակ-6)
12. Օգնու՞մ եք ծերերին (այո-6, ոչ-1, նայած ժամանակ-5)
13. Եթե ձեզ երեք հոգի միաժամանակ առաջարկություն անեն, որի՞ առաջարկությունը կընդունեք, եթե առաջինը գեղեցիկ է, բայց ձեզ չի համապատասխանում նրա բնավորությունը, երկրորդը բնավորությամբ համապատասխանում է, բայց տգեղ է, իսկ

- երորդը հրաշալի բնավորություն ունի, բայց տեսքն այնպիսին է, որի համար կարելի է ասել՝ «ոչինչ» (առաջինին-4, երկրորդին-7, երրորդին-10)
14. Դուք հպարտ եք, թե՞ գոռոզ (հպարտ-10, գոռոզ-6, երկուսն էլ կա իմ մեջ-2)
15. Ձեզանից ցածրերին ի՞նչ աչքով եք նայում (լավ-9, սովորական-5, տեսնել չեմ կարող-3)
16. Դուք ձեր հոգին համարում եք նուրբ (այո-8, ոչ-5)
17. Դուք նրբանկատ եք (այո-7, ոչ-6)
18. Ձեր կյանքում կա՞ այնպիսի մեկը, որը ձեզ համար շատ է թանկ (այո-10, ոչ-4, բոլորն էլ ինձ համար թանկ են-8)
19. Կյանքում դառն օրեր ապրե՞լ եք (այո-7, ոչ-10)
20. Կյանքը ձեր հանդեպ դաժանություն արե՞լ է (այո-5, ոչ-9)
21. Երջանկության պահեր երբևէ ապրե՞լ եք (այո-10, ոչ-5, չեմ հիշում (չեմ կարող ասել-0)
22. Ու՞մ հետ եք դուք ձեզ երջանիկ զգում (ծնողների հետ-6, ամուսնու հետ-7, ընկերական միջավայրում-8, ձեր սիրո ասպետի հետ-9)
23. Ընդունում եք, որ կապուտաչա մարդիկ քմահաճ են (այո-10, ոչ-7, նայած որտեղ-9)
24. Ընդունում եք այն միտքը, որն ասում է՝ «կյանքը ևս կապուտաչա է, դրա համար էլ շատ են կյանքի քմահաճույքները» (այո-10, ոչ-5, նայած որտեղ-7)
25. Երբևէ պատահե՞լ է, որ ցավ զգաք հոգում և դրանից դրդված ինքնասպանության ցանկություն ունենաք (այո-3, ոչ-6, քննադատաբար եմ մոտենում այդ հարցին-10)
26. Ապագայի կյանքն ինչպե՞ս եք պատկերացնում (վառ գույներով-7, լրիվ մշուշված-4, ոչ մի պատկերացում էլ չունեմ-2)
27. Դուք կարո՞ղ եք տխուր պահերին ուրախ ձևանալ, եթե դա անհրաժեշտ է (այո-10, ոչ-9, նայած տխրությանս չափի-8)
28. Եթե դուք ուրախ եք, բայց ձեր միջավայրում ինչ-որ մեկը տխուր է, կարո՞ղ եք ձեր ուրախությունը թաքցնել և նրան հոգեպես սատար կանգնել (այո-10, ոչ 5, չեմ կարող աս-6)
29. Տխրո՞ւմ եք, երբ տեսնում եք վիրավոր կամ սպանված թռչունի կամ կենդանու (այո-10, ոչ-5, չեմ կարող ասել-1)
30. Խղճմտանք զգո՞ւմ եք օլիգրոֆենիայով տառապողների (մտավոր հետամնաց) հանդեպ (այո-10, ոչ-3, նայած ժամանակ-4)

Արդյունքները

100-140 ՄԻԱՎՈՐ ՖԼԵԳՄԱՏԻԿ (ՈՒԺԵՂ, ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՎԱԾ, ԻՆԵՐՏ)

Դիմախաղն աղքատ է, շարժումներն անարտահայտիչ են, աչքի է շարժումներն անարտահայտիչ են, աչքի է ընկնում աշխատունակությամբ, համբերատարությամբ, զսպվածությամբ և ինքնատիրապետմամբ, դանդաղ է կենտրոնացնում ուշադրությունը

141-180 ՄԻԱՎՈՐ ԽՈՆԵՐԻԿ (ՈՒԺԵՂ, ԱՆՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՎԱԾ, ԻՆԵՐՏ)

Անզուսպ է, անհամբեր, բռնկվող, ունի համառություն, բայց ուշադրությունն արագ է տեղափոխում, աչքի է ընկնում թույլ զգայունակությամբ

181-215 ՄԻԱՎՈՐ ՍԱՆԳՎԻՆԻԿ (ՈՒԺԵՂ, ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՎԱԾ, ՇԱՐՇՈՒՆ)

Անզուսպ է, անհամբեր, բռնկվող, ունի համառություն, բայց ուշադրությունն արագ է տեղափոխում, աչքի է ընկնում թույլ զգայունակությամբ

216 և ԲԱՐՁՐ ՄԵԼԱՆԽՈՒԿ (ԹՈՒՅԼ, ԻՆՔՆԱՍՓՈՓ, ՉՇՓՎՈՂ)

Փոքր իսկ առիթի դեպքում կարող է արտասվել հիվանդագին զգայուն է, Ձայնը ցածր է, անվստահ է, երկչոտ, ամենափոքր դժվարությունն անգամ դարձնում է անգործույթ:

Իմանալով դեռահասների խառնվածքների տիպերը, ավելի ճիշտ պատկերացու կունենանք նրանց անձնային առանձնահատկությունների մասին:



Դեռահասների հետ արդյունավետ շփման կանոնները

1. Լսել դեռահասին:

Մի հայտնի քանդակագործ ասել է, որ մինչ քարի հետ աշխատելը նա միշտ սպասել է, թե ինչ է ասում իրեն քարը և հետո նոր սկսել ստեղծագործել:

Եթե մեծահասակը հետաքրքրված է դեռահասի կյանքով, հարցադրումներ է անում, ապա նա մեծ հավանականությամբ լինում են բաց: Ուսուցիչները միշտ կարող են քննարկումներ ունենալ դեռահասների հետ դասամիջոցներին կամ ազատ ժամերի ընթացքում, արդյունքում ունենալով ներգրավված դեռահաս դասի ընթացքում:

Դասարաններից մեկում մի աշակերտուհի ունեի, ծնողները բաժանված էին, մայրը եղբոր հետ հեռացել էր, թույլ չէին տալիս դստեր հետ շփվի, տատը մահացել էր, ապրում էր հոր և պապի հետ, տատի մահանալուց հետո դարձավ ինքնանստ, անուշադիր, տխուր, փորձեցի գրուցել նրա հետ, երբորդ գրույցի ժամանակ կիսվեց ինձ հետ և սկսեց հաճախակի գալ, գրուցել, կիսվել իրեն հուզող հարցերով և նա կամաց-կամաց փոխվեց:

2. Նկատել և խրախուսել դեռահասի ջանքերը, եթե նույնիսկ դրանք կատարյալ չեն:

Դեռահասները, ելնելով իրենց տարիքային առանձնահատկություններից, շատ աշխատանքներ իրականացնելիս մեծ ջանքեր են գործադրում, սակայն միշտ չէ, որ արդյունքը լինում է գոհացուցիչ, թե իր, թե մեծահասակի համար:

Սակայն դեռահասի համար էական է, որ ուսուցիչը նկատի այն աշխատանքը, որը թաքնված է այդ միգուցե «չստացված» արդյունքի հետևում:

Աշակերտներիցս մեկը դասապրոցեսում աշխատասեր չէր հաճախակի, անպատրաստ էր լինում, <<ձկներ>> թեման ամփոփելիս հանձնարարել էի ներկայացնել նկարների և սխեմաների միջոցով, նրա մոտ բավականին հաջող էր ստացվել, շատ ուրախացա գովեցի, և միևնույն ժամանակ նշեցի, եթե դասերին էլ լավ պատրաստվի իմ սիրելի աշակերտը կդառնա, նա արդեն ջանում էր աչքի ընկնել: Դեռահասին պետք է գովել այն արարքի համար որի վրա ջանք է գործադրել:

3. Աջակցել դեռահասներին ձախողումների ժամանակ:

Դեռահասները մշտապես կարիք են ունենում ուղղորդման և քաջալերման իրենց գործունեություններում, մասնավորապես ուսումնական գործունեության ընթացքում:

Յետևապես, ուսուցիչների կողմից աջակցությունը ձախողումների ընթացքում հնարավորություն կտա աշակերտներին արդյունավետ հաղթահարել դժվարությունները:

Դպրոցում ունեինք աշակերտներ որոնք քիմիա և կենսաբանություն առարկաները սովորում էին շատ լավ և մասնակցելով օլիմպիադաների հասան հանրապետական փուլ, աշակերտներից մեկը, որը բազմակողմանի զարգացած էր չհաղթահարեց և կարծես <<կոտրվեց>>, աշակերտի հետ աշխատանքներ տարվեց իր առավելությունների մատնանշմամբ ու առանձնահատուկ լինելու ուղղությամբ և արդյունքը նկատելի էր:

4. Դեռահասներին ասել այն, ինչ նրանց օգնում է իրենց առանձնահատուկ զգալ:

Յուրաքանչյուր աշակերտ յուրաքանչյուր դասաժամի ընթացքում ունենում է հատուկ որակներ և հմտություններ, որոնք իրենց առանձնացնում են այդ դասաժամի ընթացքում:

Կարևոր է, որ ուսուցիչը, անհրաժեշտության դեպքում հոգեբանի աջակցությամբ, դուրս բերի այդ կողմերը և փոխանցի դա դեռահասին:

Աշակերտներից մեկը բոլոր առարկաներից, համագործակցային դասերին ցուցաբերում էր առանձնահատուկ վերաբերմունք՝ համախմբում էր, ձևափոխում, իմպրովիզացիաներ անում, գովեցի և միևնույն ժամանակ նշեցի, որ միշտ ռեժիսյորի դերում ես, դատավորվել էր աշակերտի մոտ և նա ընտրեց այդ մասնագիտությունը, կամ աշակերտներից մեկը մակարոնով փոքրիկ կմախք էի պատրաստել շատ ոգևորեցի դրեցի դասարանի պահարանին որոշ ժամանակ անց սկսեց աշխատել փայտի վրա:

5. Ձևավորել ապահով մթնոլորտ դեռահասի ինքնաարտահայտման համար:

Դեռահասի հետ արդյունավետ հաղորդկցման առաջին պայմանը ապահովության զգացողությունն է, որը ուսուցիչը պետք է փոխանցի իրեն: Այսինքն՝ դեռահասը պետք է զգա, որ իր ասածներն ընդունելի և հասկանալի են ուսուցչի համար:

Մի դասը անում որտեղ երկու աշակերտներ չէին մասնակցում դասապրոցեսին դասապրոցեսի փուլերից մեկում օգտագործեցի <<Պրիզմա>> մեթոդը, որի նպատակն է աշխուժացնել, թարմացնել, հետաքրքրություն մտցնել: Աշակերտները արագ պետք է ասեին մքներին եկած ցանկացած բառ, զարմացած կողքերը նայելուց հետո իրենք էլ սկսեցին ակտիվ մասնակցել, վերջում իրենց գավեցի, ավելի ոգևորվեցին:

6. Տալ ընտրելու հնարավորություն՝ խթանելով դեռահասի ինքնուրույնությունը:

Դեռահասների հետ աշխատանքում, հաշվի առնելով դեռահասի մեծահասակ լինելու, մեծահասականներից առանձնանալու ձգտումը, ցանկալի է դասապրոցեսը կազմակերպել այնպես, որ դեռահասն ունենա հնարավորություն որոշումներ կայացնելու և ինքնուրույն աշխատելու: Դասապրոցեսների ժամանակ օգտագործված խորոնարդումը մեթոդական հնար է, որն օգնում է հարցը դիտակել տարբեր տեսանկյուններից, յուրաքանչյուրին տալիս է հնարավորություն ինքնուրույն նկարագրել, համեմատել, զուգերդել, վերլուծել, կիրառել, թեր և դեմ փաստարկներ բերել:

7. Խոսել դեռահասի հետ հավասարը հավասարի հետ սկզբունքով:

Դեռահասների հետ կարևոր է լինել հարգալից, չպարտադրող՝ խուսափել քարոզներից ու խրատներից, վիրավորական ենթատեքստ ունեցող բառերից և արտահայտություններից: Ուսուցիչը դեռահասի հետ միասին ուսումնական, շփման գործընթացով անցնողն է. ոչ առավել է, ոչ պակաս նրանից:

Ուսուցիչը 1-2 անգամ աշակերտի հարցերին պատասձանելուց հետո ասել էր.

- Քանի անգամ էլ բացատրեմ միևնույն է, դու չես հասկանա:

Աշակերտը երկար ժամանակ ատում էր և՛ ուսուցչին և՛ առարկան:

8. Ապահովել խոսակցության գաղտնիությունը:

Դեռահասների հետ ապահով և արդյունավետ հաղորդակցում կառուցելու կարևոր նախապայման է ապահովել քննարկված թեմաների գաղտնիությունը: Ուսուցիչ-աշակերտ շփման ընթացքում նրանք երկուսով կարող են գալ պայմանավորվածության իրենց հետագա աշխատանքի հետ կապված

Միջին տարիքի աշակերտները դարցից դուրս կռիվ էին անում, մոտեց փախան, հետ կանչեցի չբարկացա, զրուցեցինք, կոպիտ ասած ճիշտ ու սխալ տարբերեցիք, հաշտվեցին, դպրոցում այդ մասին ոչ մի խոսք չեղավ, որոշ ժամանակից նորից դիմեցին կոնֆլիկտից առաջ, պատմեցին, կիսվեցին, կախձիք հարրցրեցին, սկսեցին մտերմանալ:

9. Դաստիարակության բոլոր մոտեցումները համաձայնեցնել մյուս

մեծահասակների (ծնողներ, ուսուցիչներ և այլք) հետ:

Դասապրոցեսի ընթացքում դեռահասի հետ որևէ մոտեցում փորձելու և արդյունավետ արդյունքներ ունենալու դեպքում, ցանկալի է դա կիսել այն բոլոր մեծահասակների հետ, ովքեր աշխատում են դեռահասի հետ, միանման և հաստատուն մոտեցում ապահովելու համար:

10. Լինել օրինակ դեռահասի համար:

Դեռահասից ցանկացած պահանջ ունենալու դեպքում, կարևոր է, որ ուսուցիչը ինքը ևս նույնատիպ վարքային դրևորումներ ունենա:

Նա պետք է դրսևորի այնպիսի կարևոր հատկություններ ինչպիսին են՝ լսելու ընդունակությունը, անկողմնակալությունը, ուշադրությունը, արդարությունը, կայունությունը, նրբազգացությունը, իսկական սերը երեխաների հանդեպ: Մանկավարժի համար շատ կարևոր է ինքնակատարելագործման, ինքնազարգացման ցանկությունը: Աշակերտի համար սիրված ուսուցչի արտահայտած միտքն ընկալվում է որպես ճշմարտություն: Շատ ավելի հեշտ կարող է լինել այն ուսուցչի համար, ով կարողացել է հուզական կապ հաստատել, հետաքրքրել դասարանին, սեր սերմանել իր առարկայի նկատմամբ, դրանով իսկ բարձրացնել ակադեմիական կատարողականը և սովորողների մեջ սերմանել գիտելիքի ցանկություն:

Եզրակացություն

Դեռահասի անձնային առանձնահատկությունների իմացությունը թույլ է տալիս ստեղծել նրանց ուսումնական գործընթացին հնարավորինս նպաստող պայմաններ և նրանց հետ արդյունավետ շփման հնարավորություններ:

Աշակերտի պատկերացումներն ու կապը շրջապատի հետ հոգբանական հարցերով փորձարարական աշխատանքի արդյունքները ցույց տվեցին, որ իրենց նկատմամբ դրական վերաբերմունք ունեցող աշակերտների շրջանում նկատվում է դրական պահերի գերակշռում այլ ոլորտներում՝ (հարաբերություններ ծնողների հետ), (հարաբերություններ հասակակիցների հետ), (մոտ մեծահասակի ներկայություն), (մոտ հասակակիցի առկայություն), որը ցույց է տալիս այս դեռահասների հուզական կայունությունը: Իրենց նկատմամբ բացասական վերաբերմունք ունեցող աշակերտների մոտ զգալիորեն ավելացել են խնդիրներն այլ ոլորտներում: Ինչ վերաբերում է ապագայի նկատմամբ տարբեր վերաբերմունք ունեցող աշակերտներին, ապա այս միտումը դրսևորվում է նաև այստեղ, թեև ոչ այնքան հստակ:

Այս բոլորից մենք կարող ենք եզրակացություն անել.

Ստացված արդյունքները հաստատում են մեր վարկածը «ես-ինքս» և «ես-ուրիշներ» հարաբերությունների փոխկախվածության մասին: Եվ հնարավորինս ազդելով մեծահասակների և հասակակիցների հետ դեռահասների հարաբերությունների ոլորտի վրա՝ այն օպտիմալացնելու նպատակով, մենք կարող ենք նաև օգնել բարելավելու նրանց հուզական ֆոնը, վերաբերմունքն իրենց և ապագայի նկատմամբ :

«Ի՞նչն էք ամենաշատը գնահատում մարդու մեջ» դեռահասներին առաջարկված հարցաշարը ներառում էր նաև դեռահասի համար ամենակարևոր բնավորության գծերին և գործունեությանը վերաբերող հարցեր: Տվյալների մշակումից և դասակարգումից հետո ստացանք հետևյալ արդյունքները:

Դեռահասները խոսելով անհատականության ամենաարժեքավոր գծերի մասին՝ ամենից հաճախ անվանել են բարություն, բնավորություն, ազնվություն, ուշադրություն:

Սա թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած հասարակության մեջ տիրող դաժանությանը, անտարբերությանը, կոպտությանը (կամ գուցե «դրանց շնորհիվ»), բարությունը, հասկացողությունը, քաղաքավարությունը, առատաձեռնությունը հավանության են արժանանում և ողջունվում դեռահասների կողմից: Բայց, ըստ ամենայնի, երիտասարդ սերունդները հասկանում են այսօրվա կյանքի բարդությունները՝ առանձնացնելով այնպիսի անձնային հատկանիշներ, ինչպիսիք են բնավորությունը, աշխատասիրությունը, խելքը:

Սա հանգեցնում է այն եզրակացության, որ այսօրվա երիտասարդությունը սկսում է ավելի վաղ, ավելի լուրջ և գիտակցաբար մտածել ապագայի մասին՝ դպրոցը որպես մասնագիտություն ձեռք բերելու անհրաժեշտ պայման: Այնուամենայնիվ, ընկերների հետ շփումը շարունակում է կարևոր դեր խաղալ:

Քանի որ դեռահասները նույնպես սկսում են ուսումնասիրել շփման նոր ձևերը մեծահասակների հետ, բայց միևնույն ժամանակ խիստ սահմաններ են դնում իրենց հետ շփման ընթացքում, ուսուցիչը լինելով ներառված այնպիսի կառուցվածքային գործընթացի մեջ ինչպիսին դասապրոցն է՝ պետք է սիրի բոլոր երեխաներին՝ աղմկոտ թե լուռ, հնազանդ թե քմահաճ, կոկիկ թե անփուլթ, մենք չպետք է մոռանանք սա, քանի դեռ երեխան շփման և զգացմունքային շփման կարիք ունի : Մենք միշտ պետք է աջակցենք , նույնիսկ երբ նա չի հաջողվում: Այն օգնում է ձևավորել ինքնավստահություն և սովորելու ցանկություն առաջացնում: Ինձ համար առաջին տեղում երեխան է՝ իր հետաքրքրություններով, ցանկություններով ու հնարավորություններով: Փորձում եմ հետաքրքրել աշակերտին, շրջապատել նրան ջերմությամբ, որպեսզի ճիշտ դաստիարակեմ, ուղղորդեմ ճիշտ ճանապարհով: Դրա համար յուրաքանչյուր ուսուցիչ՝ հատկապես դասուցիչը. նախապես պետք է ուսումնասիրի դեռահասին հոգեբանական և խառնվածը պարզող թեստերի միջոցով, մշակի դեռահասների հետ արդյունավետ շփման իր կանոնները:

Օգտագործված գրականության ցանկ

1. <http://www.zangak.am/pdf/Hogeban-2012-3-4.pdf> [9 էջ] - Հասանելի է 26/07. 22
2. <https://www.mapa.am/dastiarakutyany-hatuk-khndirner/> - Հասանելի է 27/07. 2022
3. <https://impoqrik.am/3-6%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6/6154-%D5%A4%D5%A5%D5%BC%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BD%D5%AB-%D5%B3%D5%A3%D5%B6%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B4.html> Հասանելի է 28/07. 2022
4. <https://www.online-apteka.am/arm/610/50743/%D5%8D%D5%A5%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%A1%D5%BD%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%B4%20%D5%AF%D5%A1%D5%B4%20%D5%B8%D6%82%D5%B2%D5%B2%D5%A1%D5%AF%D5%AB%20%D5%B0%D5%A1%D5%BD%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%B4.%20%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6/article.more.html> Հասանելի է 28/07. 2022
5. <https://muegn.ru/hy/documents/on-by-l-privyazan-k-svoemu-uchitelyu-umestna-li-emocionalnaya.html> © muegn.ru Հասանելի է 28/07. 2022

